Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների մեծությունների տատանումների մեղմանն ուղղված կայունացման հաշվի բացման և վերջինիս ձևավորման, կառավարման հարցերի կանոնակարգման նպատակով նախատեսվում է մշակել «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել իրավասու մարմնին:

Նախատեսվում է մշակել և իրավասու մարմնին ներկայացնել նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, որի շրջանակում կլրամշակվեն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն տույժերի և տուգանքների կիրառման դրույթները՝ իրավախախտումների համար որպես տույժ կամ տուգանք նախատեսելով նաև նախազգուշացումը, ինչպես նաև ըստ կարգավորվող անձի շրջանառության ծավալի կիրառվող համապատասխան տարբերակված տույժ:

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է տարեկան արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրության վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքը:

Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ

պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հանրային կազմակերպությունների 2019 և 2020 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է կազմել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: